

M. Archam Poste Restante
Athènes (Grèce)

ՏՄՐԵԿԱՆ . . . Ֆրանս 4
ՎԵՑԱՄՍԵԱՅ . . . « 2

ՄԻՈՒԹԻՒՆ

Բաժնեկցիի փոխարէն ամեն երկրէ կըն-
դունուի նամակադրուի (փուլ) :
Ամեն անոնք՝ որ բաժանորդ կը գրուին
և առաւանակն երկը ամիսէն չեն վճարեր
չորրորդ ամիսը թերթ չպիտի ստանան :

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ե. Տ Ա Ր Ի

ԱԹԷՆՔ

1901

Մ Ա Ր Տ

Թ Ի Ի 46

ՄԵՐ ԳԱՂԱՓԱՐԱ- ԿԻՑՆԵՐՈՒՆ

Ամբողջ հինգ երկար տարիներէ ի վեր
Հայ ժողովրդի բերանն է միութեան բառը. և
ո՞վ չգիտէ արդէն՝ որ առանց միութեան կամ
համերաշխ գործակցութեան ազատութիւն
ձեռք բերելու յոյսը, տխմար անկալութիւն
մը և խաբուսիկ երազ մըն է : Այս բացարձակ
իրողութեան խորապէս համոզուած՝ միութեան
ջերմ փափագող դատակարգը՝ առանց ինքզին-
քը արդարացնել փորձելու պէտք է խոստովանի
թէ՝ չա՛տ թոյլ և ոչ նուազ անտարբեր վե-
րաբերուեցաւ դէպի իր ստանձնած մեծ գոր-
ծը : Իրօք ի սկզբան ամեն տեղէ ձայն բար-
ձրացուց, շրջաբերականներ հրատարակեց,
սպառնալիքներ ըրաւ, կուսակցութեանց կարգ
մը նենգամիտ ու ֆանատիկ կուսակցամու-
անդամները՝ եթէ ոչ ի սրտէ, դէժ առ երի-
ւոյթս իրենք զիրենք միութեան գաղափարի
համակիր հռչակելու հարկին մէջ դրաւ, բայց
այս ամենը բաւական չէին իրենց նպատակը
իրագործելու : Միութեանականները իրենց գոր-
ծը յամառօրէն շարունակելու, և հետզհետէ
իրենց գաղափարակիցներ փնտռելով յարատե-
լիցութեան յարաբերութեան յարաբերութեան
տատելու էին. տարիներու ընթացքին մէջ
երբ Միութեանը բաւական զօրացած տեսնե-
ին, այսօր պիտի կրնային գործնականին մէջ
վճռական քայլեր առնել : Մեր գաղափարա-
կիցներու գլխաւոր թերութիւնը՝ կարգ մը
կարծեցեալ գործիչներու միութեան գաղա-
փարի դէմ մղած խուլ հալածանքէն յու-
սահատիւն ու խանդավառ ոգևորութեամբ
սկսած գործէն անմիջապէս նահանջին ե-
ղաւ :

Բնական էր որ իրենց հաշտոյն աշխա-
տող գործիչները պիտի հակառակէին միու-
թեան, քանի որ գիտէին թէ հիմնական
միութեանը գոյանալէն յետոյ իրենք գործ չը
պիտի ունենային անոր մէջ : Առ այս ու-
նինք մեր ձեռքը զօրաւոր փաստեր. — վառ-
նային՝ Սլիվէն, Բարիլէն, Լօնտոն և Լօն-
տօնէն Ամերիկայ զրկուած շարք մը թըղ-
թակցութիւններ, որով միութեան իրակա-
նացումը՝ փաստակար հռչակելով՝ կը յորդո-
րէին մեր բարեմիտ դասակարգին ետ քաշ-
ուիլ այդ փնտաբեր գործունէութենէն : Ի-
րաւ է թէ՝ այդ բախտախնդիր տարրը մա-
սամբ իւրը յաջողեցաւ իր լիրբ ու սղա-
ղաւ արարքներն ի գործ դնել, խեղդելով
Միութեան ձայնը մի ա յ ն ժ ա մ ա ն ա կ ի
մը համար : Բայց մեր գաղափարակիցներն՝
աններկի թերութեան մէջ ինկան խաբուե-
լով այդ վիժուկներէն. չնայելով որ իրենք
միութեան ջերմ փափագողներ էին, կը
պատկանէին դարձեալ այս կամ այն կու-
սակցութեան, հետեւապէս երբ կը անանէին

իրենց պատկանած կուսակցութեան դէմ
«Միութեան»ի մէջ հրատարակուած քննա-
դատական մը, թերթը բլտելով կը նետե-
ին ու իսկոյն կը հեռանային գաղափա-
րակցութենէ, նոյնը կ'ընէր հակառակ կու-
սակցութեան պատկանող միութեանական մը :
Այս է ահա բուն պատճառը որ հինգ եր-
կար տարիներէ վերջ ո՛ր և է արդիւնք մը
չկրցինք առաջ բերել :

Բայց հիմա մեր յարգելի գաղափարա-
կիցները բացայայտ կը տեսնեն որ իրենց
պաշտած կուսքերը զիրար անուանտրկելու
և իրար դիմադուրկ բնելու տխուր, բայց
ճշմարիտ դերը ստանձնելով՝ սկսած են ցարդ
իրենց մէջ պահած ճիշդութեան գաղտ-
նիքները հրապարակ հանել : «Միութեան»ը
ինչպէ՞ս վաղուց հրատարակած է, այդ ա-
րարածները տուրակի մը մէջ զետեղուած
թունաւոր օձեր են առանց բացառութեան :
Եթէ ձեռքդ տուրակին մէջ դնելով, անոնց-
մէ մէկը՝ — որն ալ ըլլայ — դուրս հանես,
պիտի տեսնես որ ձեռքդ մը, հրէշ մը,
սատանայ մըն է այն, միայն գոյնը տար-
բեր : Ահա ասոնք էին միութեան գաղա-
փարի հոսանքը կասեցնել ջանացող, մա-
քուր մտքերն ապակեմող միջբոյնները, ո-
րոնց խաղացած ապականիչ, քայքայիչ և փճա-
ցուցիչ նուրբալի դերը մինչև հոս միայն կը
հասնէր ու կանգ կ'առնէր, ըստ թրքական
առածին թէ՝ ե ա լ ա ն ճ ը ն ը ն մ ու մ ու
ե ա թ ս ը ե ա յ փ ա տ ա Ր Ե ա ն ա Ր :

Հիմա թողունք մենք այս ողորմելի
արարածները իրենց խեղճուկ վիճակին մէջ
և դառնանք մեր այսօրուայ կենսական հար-
ցին, այն է Միութեան խնդիրը : «Միութե-
ան»ը չնայելով որ զինքը առանձին թո-
ղուցին իր գաղափարակիցները, տարտամ
քայլերով մինչև հիմա շարունակեց հրատա-
րակութիւնը, համոզուած ըլլալով թէ՝ օր մը
վերջապէս ուշ կամ կանուխ իրական ճշ-
մարտութիւնը արեւակի լոյսին պէս պիտի
փայլի : Մենք այդ կեղծարար գործիչներու
վատահամբաւ ընթացքէն զգուած՝ պահ մը
միութեան կամ համերաշխութեան խնդրէն
այլևս յուսահատած, մեր վերջին յենա-
րանը համադրումար ժողովի մը առաջարկին
մէջ գտանք, բայց ի շնորհս նոյն սե օձե-
րու ձեռք առած ստորին միջոցներուն այդ
ալ ի դերն ելաւ : Այլ ի՞նչ կը մնար մեզ
ընել : Թերթը դադարեցնելով իսպառ հրա-
ժարիլ ասպարէզէն, թէ՛ չնեղու հետ տուր-
ակը մտնել յանձն առնելով շարունակել
մեր գործը. — այս վերջինը նախընտրեցինք,
և կը յարատեւենք, ու անընդհատ պիտի
շարունակենք մեր գործը, մինչև որ հրա-
պարակը մաքրուած տեսնենք : Աւելորդ է
ըսել թէ այն ատեն արդէն մեր բաղձացած
միութեանը ինքնին իրականացած պիտի ըլլայ :

Մինչև ցարդ մեր քարոզած միութեանը
չատերը թիրիմացութեամբ սխալ ըմբռնե-
ցին, կարծելով թէ՝ անկեղծները կեղծա-
ւորներու, անհաւանդիրները բախտախնդիր-
ներու, անձնուրաց յեղափոխականները ազ-
գուրաց դաւաճաններու հետ անպայման
կերպով միացնելու կը ձգտինք. բնականա-
բար այդ տեսակ գործ մը արդէն ինքնին
ոճիր մը և դժոխային արարք մըն է, ու
մենք ալ իբր անոր հեղինակ : Ծրարորդի
մը դերը կատարած ըլլալով՝ մահու պատի-
ժը կրելու չափ դատապարտելի պիտի ըլ-
լայինք : Բայց բոլորովին ատոր հակառակն
եղած է մեր նպատակը ու գիտնալ պէտք է
որ միութեան խնդրոյ վերջին ծագումէն ի վեր,
ամեն կարգի միջոցներու դիմած ենք գաղափա-
րական զօրաւոր միութեան մը կազմելու ու ա-
նոր ղեկը քարծր ու վստահելի անձնաւորու-
թեանց յանձնելով մեր տարաբախտ ժողովրդին
դոյզն ծառայութիւն մը մատուցանելու :

Ինչպէս վերը ըսինք, դարձեալ կը կըրկ-
նենք մեր պահանջած Հիմնական Միու-
թեան ղեկը յանձնելով վստահութիւն ներ-
շնչող, ազդեցիկ, անբիծ ու մաքուր աար-
րեք բաղկացեալ կազմակերպութեան մը,
զերծ ամեն կարգի փորքկութիւններէ ու
նենգամտութիւններէ, անոր բարոյական ազ-
դեցութիւնը միայն բաւական պիտի ըլլար
ամբողջ Հայերու կամքն ու բաղձանքը կաղ-
մող ազգային դժուարագոյն ծրագիրները
տակաւ առ տակաւ գործադրութեան մէջ
դնել. ներկայացնելով մեր տառապանքները
մեծ պետութեանց դաշինքներու առջև, ա-
նոնց ուշադրութիւնը հրաւիրել դէպի մեր
դատը. փոխանակ այդ մեծ և փափուկ գոր-
ծը թողելու յղբուկ, թեթևօտիկ անարժան
անհատներու, որ անուն մը կամ դիրք մը չինե-
լու համար յօնք չիտկելու տեղաչք կը հանեն :

Հիմնական միութեան գործօն դերը ընդհ. հայութեան մէջ արձագանք պիտի դնէր, և
և ամեն տեղերէ համակրութեամբ ու յարգան-
քով պիտի ընդունուէր անոր տուած հրա-
հանքները, որով ոչ միայն Հայ ժողովրդի սրը-
տերուն մէջ Հայրենասիրական եռանդը վառ
պիտի պահէինք, այլ անոնց վստահութիւնը ա-
ռանց ո՛ր և է կասկածանքի շահած ըլլալով,
նիւթական զօրաւոր ոյժ մը գոյացուցած և
Հայ յեղափոխութեան համար ընդարձակ հող
պատրաստած պիտի լինէինք. ու այդ պայմա-
նով միայն օր մը ամբողջ Հայութիւնը մէկ
սիրտ, մէկ բանակ միահամուռ ոյժով ապրա-
տամբութեան դրօշը ծածանած՝ վճռականա-
պէս պիտի որոշէր իր ճակատագիրը :

Այս նիւթին վրայ թէև կ'ուզէինք մի քիչ
երկար խօսիլ, բայց տեղի ուղութեան պատճա-
ռով կը թողունք յառաջիկային մատնանիլ ընել
մեր գաղափարակիցներուն թէ՛ իրաց այս կա-
ցութեան մէջ ի՞նչ միջոցներու գիմելու ենք
մեր բաղձացեալ Հիմնական Միութեանը իրա-
գործելու համար :

ԽԱՉԱԳՈՂԻՆ ՏՈՊՐԱԿԸ

«Բարի կամ չար ծառը իր պտուղէն կը ճանչցուի», օրինաւոր մարմիններն ալ իրենց պտուղներէն:

(Մեծ Յեղափոխականը)

Սորազորիս տարօրինակութիւնը թող չի դարմացնէ արտասահմանի հայութիւնը կամ ընթերցողները: Վէպ մը չէ որ կը գրեմ՝ երեւակայութիւններու մէջ խորասուզուած. և ոչ ալ մասնաւոր գաղափարներ առաջ քշելու ախտէն բռնուած եմ, ընդհակառակը, ազնիւ և դէպի լաւը ձգտող դասակարգի մը խուլ բողոքի արձագանքն է որ կը կրկնեմ...

Օրուան կենսական խնդիրն է ներկայ ճգնաժամը, արտասահմանի հայութեան համար չկայ աւելի նուիրական պարտականութիւն մը որքան ազատութեան կարօտ թշուառ ժողովրդի մը օգնութեան ձեռք կարկառելը: Սակայն ափսոս, հազիւ թէ անա մի քանի երիտասարդներ քով քովի կուգան իրենց ձգտումներով օգտակար օժանդակութիւն մը ընելու, անմիջապէս ատոնց գլխուն վերեւ կը տնկուի խաչագողը կամ վաշխառուն և կը ջանան ատոնց «քիթէն սանձ անցնելով քարշ տալ» իրենց ետեւէն և անոնց գործունէութեան արդիւնքը տարրալուծել իրենց խորհրդաւոր տոպրակին մէջ:

Հարկ չկայ կտաւին վրայ չպրտելու վաշխառուն կամ խաչագողին դիմագծերը, գոյներով ներկայացնելու ժողովրդին է՛ն թշուառ դասակարգին արեւն-արեւոյնքով խոշորցուցած փորը և հաստացուցած վիզը: Արդէն այդ վաշխառուն ծանուցումները ամեն օր կը կարդանք «ժողովրդի շահերուն պաշտպան, յեղափոխութիւնը տարածելու ուղղութիւնը և նպատակը ունեցող, մատենի չեն երին, դաւաճաններին և վաշխառուններին» հարուածներ ահագնող «Ծարժում» թերթին առաջին սիւնակին ճակատը, որով կը յանձնարարուի երթալ կեղեքուիլ, հարստահարուիլ այդ անխիղճ վաշխառունէն:

Անկեղծ յեղափոխականը ետ քաշուեցաւ ասպարէզէն, այսօր հրապարակին տիրացած են խաչագողներն ու վաշխառուները իրենց քիթն խուսկ ծխողներով և եւամախնեւորով: Այս օրքան կ'ուզէ թող պօռայ մամուլը, որքան կ'ուզեն թող հեծն և օգնութիւն խնդրեն Տաճկահայաստանի հարստահարուած հայրենակիցները արտասահմանի եղբայրներէն, որքան կ'ուզեն թող միութիւն աղաղակեն անկեղծ ազգասէրները, որքան կ'ուզեն թող ժողովներ գումարեն Ամերիկայի հայրենասէրները, որքան կ'ուզեն թող ձգտէին 28 սնտուկի և Տիկնանց մասնաճիւղի հերոսներուն անմահանալը... (*) և վերջապէս որքան կ'ուզեն թող աչք գոցեն յեղափոխական մարմինները (ժողովրդի շահերուն պաշտպան(?)) եղած խաչագողութիւններու հանդէպ, այսօր ակներեւ ճշմարտութիւն մըն է թէ՛ զեղծումներն ու գողութիւնները տեղի ունե-

(*) Տիկնանց Մասնաճիւղի մութին մէջ կորսուած հաշիւները Պալքանեան առժամայ կեդր. կոմիտէին խնդրանքով հրատարակուեցան «Դրօշակի» թւոյն մէջ... դայթակողութեան մէկը մէջտեղէն վերցնելու համար: Զեղծումը՝ զեղծում մնաց. հրատարակութիւնը քանակութիւնը հաստատեց, նոյնը պիտի ըլլայ նաև 28 սնտուկին:

ցան անարգել, եղած բողոքներն ու զանգատները առ ոչինչ գրեցին, յանցաւորներն անպատիժ մնացին, որոնք աւելի ոյժ առնելով ընդլայնեցին խաչագողական տոպրակը: Մարմին ըսուած կազմող անձերը վստահութիւն բառին առջև խոնարհեցան, խիսկին իրենց ականջները և գուցէ անուղղակի կերպով աւելի լայն արտօնութիւններ տուին իրենց ամբաստանեալ բայց վստահելի ընկերոջ. որ իր արդէն եղած փորձանքին վրայ կ'աւելցնէր նաև վաշխառուն ճնշիչ ազդեցութիւնը, որուն առաջին «քայլերգ» տեսանք որին պնակին մէջ:

Յեղափոխական մարմինները, (եթէ իրօք կան) թոյլատրեցին իրենց անտարբերութեամբ և աւելի ասպարէզ տուին անոնց յուսահատեցուցիչ և վնասակար առաջխաղացութեան (այսպէս պիտի տրամաբանենք, որովհետեւ երբ կը տեսնենք յեղափոխական պաշտօնեայ մը կամ գործիչ մը, որ «անսահման վստահութեան» կ'ընէ՝ ամեն տեսակ խաբէբայութիւններ կ'ընէ, ամեն տեսակ զեղծումներու և խաչագողութիւններու պատճառ կըլլայ. մութին մէջ գաւեր կը լարէ, անսալ տեսակ միջոցներով ժողովրդին շահերուն թելերը ձեռքին մէջ բռնած ըստ հաճոյս, դէպի իր տոպրակը քաշքշելու համար աներեւակայելի անիրաւութիւններ կ'ընէ, թուրք արդի ռէժիմը ներկայացնող միտքին պաշտօնեաներուն պէս, ու երբ հրապարակաւ կը քննադատուի ու մատնանիլ կըլլուի իր վնասակար գործունէութիւնները, անպատկառ կերպով իր ընկերը, կամ աւելի լաւ է ըսել, իր պատկանած կուսակցութիւնը կը վստահացնէ թէ՛ «էլի ես ինչով եմ մեղաւոր, դրանք Դաշնակցութեան հակառակումեն» (Իրեւ թէ գործուած խաչագողութիւնները, զեղծումները և վաշխառուններն հետ կ'ընակ կ'ընակի տալով ժողովրդին գլխուն փորձանք ըլլալը, Դաշնակցութեան ծրագրին հիմը եղած ըլլալը. և այդ հանրածանօթ հերոսն ալ՝ անոր գործադրիչ պաշտօնեան):

Սակայն... երբ գործուած զեղծում մը, կամ խաչագողութիւն մը քննութեան կ'ենթարկուի ու իրարու հակասող բացատրութիւններէն տարբեր անձեր զոհելու կը ջանան, և երբ բուն յանցաւորներն անպատիժ կը մնան (թերեւ կը վարձարուին ալ) և երբ ժողովրդի «կարեւորութիւն» չեն տար և անոր բողոքի ձայնը չեն լսեր, ի հարկէ այն ատեն ամեն տոբակոյս կը վերնայ մէջտեղէն և սահմողումը գոյացնել կուտայ թէ՛ արդի յեղափոխական մարմինը կազմողները կամ անգլխակից մարդամեքենաներ են՝ խաբուսիկ ձեւակերպութիւններու դիւրահաւան, և կամ ամենքն ալ միեւնոյն խմորէն չինուած են, որ տակաւին չեն ուզեր վաշխառուն և խաչագողին զոհելի արարքները դադարեցնել, և դուցէ իրենց փայլը և համբաւը ներկայացրեն իրենց համար է որ սանձարձակ թողուցած են և կը պաշտեն Պալքանեան երկիրներու իրազօր ներկայացուցիչը, որ հանրածանօթ վաշխառուն հետ, իբրեւ իրարու զօրավիճ ընկեր, պաշտպան ունենալով նաև Դաշնակցութիւնը, կը շարունակեն ճնշիլ, քանդել, յուսահատեցնել և մինչև իսկ քիթերնին որբին պնակին մէջ խոթել...

Հինգ երկա՛ր տարիներ պոռացին, իրաց ներկայ խայտառակ հոսանքին վերջ մը տալու

և ուղղութեան բերելու համար վիճաբանեցան, գրեցին, ւստանանիչ ըրինք մինչև այսօր նոյնը կը շարունակուի, մաղի մը չափ տարբերութիւն չկայ: Հերոսներ ու հերոսուհիներ ծնող ազգ մը, այսօր չէ կարողացեր զաւակ մը դուրս բերել, որ կարողանար քիչ մը մեղմացնել խաչագողներու ու վաշխառուներու անխիղճ արշաւանքը: Ամեն կողմ դիտկնային անտարբերութիւն, ամեն կողմ յուսահատութիւն և երկպառակութիւն... Արդէն որ խաչագողը երկպառակութեան սերմեր չէ ցաններ հոն՝ ուր իրեն տոպրակին յարմար որս է տեսեր, որ կեղտոտ յեղափոխականը «ժողովրդի շահերուն պաշտպան» ելեր է և ազատեր է վաշխառուն ճիրաններէն:

Ներկայ իրական և յուսահատեցուցիչ խայտառակութիւններուն հանդէպ, կոմիտէներ կամ մարմիններ՝ որոնց մէջ անշուշտ ազնիւ ունձեր ալ կը գտնուին, եղած բողոքներու ու գանգատներու փոխանակ բաւարարութիւն տալու, այնպէս ձեւացուցին թէ իրենք այդ տեսակ խաչագողական կամ անհատական խնդիրներով զբաղելու ժամանակ չունին. իրենց գործունէութեան առարկան միայն հանրային հանգամանք ունեցող ազատութեան գործն է, իրենք աւելի գործի մարդիկ են քան թէ խօսքի: Ու տակաւին մըտածել որ մեր ազգին մէջ կամ աւելի ճիշդը, յեղափոխական ասպարէզին մէջ գտնուած անաչառ, անկեղծ ազգասէրները քով քով պիտի գան միացնեն երկու կուսակցութիւնները, դատեն ու գուրս նետեն Արփիարը, պատժեն խաչագողները, խայտառակն Տիկնանց մասնաճիւղին խայտառակ հերոսները, վերջ մը տան Վարգոյն անդրհանգրեւան ցափառներուն ու մանօվրաններուն, որուն վնասակար արդիւնքը մինչև այսօր տեսնելու դժբաղդութիւնը ունեցեր է Պուլիտերիոյ հայ գաղութը. հակառակ այդ անձին դէմ՝ եղած այնքան բողոքներուն ու գանգատներուն, և խաղաղեցնելին ժողովրդին մէջ տիրած երկպառակութիւնը:

Զարմանալի ակնկալութիւն և յոյս...

Այս օրը կը նայի ժողովուրդը բերանը բաց և ուսկից կը յուսայ իր ապաւենելու Մամուլը անսակ մը թուղթի կռիւ է. որ երբեք իր ազդեցութիւնը չներգործեր խաչագող-վաշխառուն զղացումներուն վրայ, յեղափոխական մարմինները ամենէին կարեւորութիւն չեն տար ժողովրդի բողոքներուն ու պահանջներուն, և ինքզինքնին բոլորովին անջատ կը նկատեն իբրեւ այլասեւ մի ազգութիւն, որոնց առջև բողոքի ու արդարութեան ձայնը կը ցնդի, ինչպէս որբին աղաղակը՝ ծանօթ վաշխառուն խոժոռ նայուածքին առջև:

Ուրեմն փոխանակ մարմիններէն սպասելու պահանջուած բաւարարութիւնը, թող ժողովուրդը գործնական կերպով դիմէ այն միջոցներուն, ինչ միջոցներով որ իրենք կը զգացուին: Կրկնեցինք մտիկ չեն ըլլալ, որքան կուզես խայտառակէ, պատռէ դիմակներն, մատնանիլ ըրէ իրենց պատկանած կուսակցութիւններուն, երեսներն «Վանեցիի թուրով» իսկ լուսո՛ւ առողջարար տուէ մըն է անոնց համար: Ատոնք ժողովուրդի անունով հրապարակ կուգան՝ իրենց տոպրակին համար, բաւական է որ քիչ մը վստահութիւն ներշնչած ըլլան իրենց շուրջը գտնուող ընկերներուն, ալ ատոնց համար կարեւորութիւն չունի ո՛չ ժողովուրդը, ո՛չ խիղճ, ո՛չ արդա-

բուծիւն, ատոնց համար բնաւ նշանակութիւն չունին նաեւ նշանաւոր յեղափոխական գործիչներու ասպարէզէն կամաց կամաց եւ քաշուիլը՝ իրենց սյուանդակութիւններուն պատճառաւ (խօսքս հիւններուն չէ), որոնց լուրերը ամեն օր կը հասնին նոյն իսկ իրենց ականջնուն, ատանկներուն կամ բնաւ երես աւալու չէ և կամ վզերնուն բռնելով իրենց տոպրակին մէջ խփելու է...

Այո, ժողովուրդի դիակնային անտարբե-
րութիւնը ծնունդ տուաւ պոռոնց տոպրակին,
ալ գանգատելու հարկ չկայ. կամ գործնակա-
նին դիմելու է և կամ բնաւ ձայն չհանելով
մտնելու է ատոնց տոպրակին մէջ, կոյր հա-
մակերպութեամբ:

ՁԱՐՈՒՀԻ

Վառնա, 20 փետր. 1901

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՆՑԵԱԼԷՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԷՆ

Կեանքի մէջ օրեր կան որ մարդուն ու-
շագործութիւնը կը դարձնեն դէպի ինքնամիտ-
փութ, օրեր՝ որոնք յակամայս կը բռնադա-
տեն մարդը: Խորհիլ այն հարցի վրայ թէ «ի՞նչ
էինք, ի՞նչ եղանք և ի՞նչ պիտի ըլլանք»: Այդ
օրերէն մէկն էր նաեւ բարեկենդանի հինգշաբ-
թին, այն օր ընդհ. հայութիւնը թէ թուր-
քիա կոչուած վայոց-ձորին մէջ (թէ և ճն-
շուսի տակ) և թէ՛ արտասահման՝ հիացումով
ու պարծանքով տօնեց ազգային Մեծ-Հայրե-
նասէրին և իր գինակիյններու անմահ յիշա-
տակը: Մանաւանդ արտասահմանի հայութիւ-
նը այդ օր շատ չարչրկեց Վարդան ու Վահան,
Հայր ու Հայաստան անունները, մարդ այդ
հանդէսներու ներկայ եղած միջոցին պահ մը
կը փորձուի մոռնալ անողորմ ներկան և փո-
խադրուիլ այդ անցեալ փառաւոր ու մեծ օ-
րերը, ուր հայը թէ և սակաւ զարգացած, բայց
աւելի պարտաճանաչ ու ազնիւ էր քան հիմայ,
ներկայ հայութիւնն ալ պարծանքով ու ակ-
նածանքով յիշելով այդ սուրբ նահատակներու
անունները բարեմաղթութիւններ և ձրի գո-
վաբանութիւններ կը շուայէ: Սակայն կ'արժէ
կարծեմ քիչ մը խորհրդածել այս նիւթին վրայ,
վասն զի միայն հողին մէջ եղած ածիւններով
պարծիլ և անցեալի փառաւոր յիշատակներով
մխիթարուիլը զմեզ չի փրկելէ զատ ինքնա-
խարութեան կը մատնէ...

Արդ՝ շրջուցիչ ցոյցերն ու շառլաթանու-
թիւնները չեն որ մեր գորաւոր վշտերուն
դարման պիտի ըլլան և ո՛չ ալ այդ հին դա-
րերու պաշտելի գործիչներու ածիւնները պիտի
կրնան յարութիւն առնելով ազատել զմեզ
այս անտանելի վիճակէն: Նախ առնենք այդ
ժամանակի հայերու կեանքը. քննենք, ի՞նչ
կը գտնենք. հոն Վարդաններ, Վահաններ են
որոնք ժողովրդին գլուխը անցած կը յորդորեն
պատուաւոր մեռնիլ քան ոտըրուկ ապրիլ ժո-
ղովրդը մը որուն իւրաքանչիւր անհատը ազ-
գին ու հայրենիքին աղէտները իր սեպելով,
յօժարակամ կը թողու իր կենցաղը և կը
փութայ արեան դաշտը, ազատութեան դո-
շին տակ մեռնելու, հոն կը տեսնենք կղերը
մէկ ձեռքը խաչ ու Աւետարան՝ իբր կրօնի
առաքեալը, և միւսը սուր՝ իբր հայրենիքի
գինուորը, հոն կը գտնենք նաեւ փափկատուն,
արքայազուն և իշխանազուն տիկիւններ, որ

ժողովրդին ցաւերովը կը տառապին, և որոնց
յիշատակը պատմութիւնը իր անկաշառ գրչով
15 դարիւնէ ի վեր անաղարտ պահած է և յա-
ւիտեան ալ պիտի պահէ, իբր հաւատարիմ
աւանդապահ: Սակայն մենք՝ ներկայ սերուն-
դս, երբ կը տօնենք այդ խնկելի հերոսներու
յիշատակը. պարտաւոր ենք խորհիլ, թէ իբր
այդ նախահայրերու սերունդը կըրցած ենք
արդեօք բարձր պահել այն սուրբ դրօշը, ո-
րուն պահպանման համար ինկան այն դիւ-
ցազունները, մեզ կտակելով անոր պահպա-
նութիւնը: Բայց ափսոս, որ ազգին մեծա-
մասնութեանը մէջէն շատ քիչեր են որ կը
հետեին անոնց ընթացած ճամբով:

Սիրելի ազգակիցներ, ի՞նչ տարբերու-
թիւն կայ նոյն դարու շահնազ-Շապուհի և
իւր կրակապաշտ խուժանին՝ ու այսօրուան
Մեծ-Միւսաղաթիւն և իւր միւսիլման մոլեռանդ
խուժանին միջև, այն ատեն ալ յանուն կրօնի
և ազգութեան հալածանք. ներկայիս մէջ ալ
նոյնը՝ աւելի քստմեցուցիչ՝ աւելի սարսու-
ցուցիչ, միայն մենք այժմ անով աւելի զեղ-
բախտ ենք, որ կորսնցուցած ենք իբր մարդ
ազատ ապրելու ընդունակութիւննիս, վասնզի
երբ Վարդանի մէկ հրաւերով 66 հազարներ
կը թափին Շաւարշան, ինչո՞ւ այսօր հարիւ-
րաւոր Վարդաններու աղետարչ կոչը չսթա-
փեցնէր զմեզ, թշնամին այսօր խօլ թափով մը
զմեզ կ'ոչնչացնէ, ու մենք անզգայացած՝ չենք
աշխատիլ ինքզինքնիս փրկելու ձեռնարկել,
այն երկիրը, որ Վարդան-Վահաններու ար-
եանը շնորհիւ մինչև մեզ հասաւ, այսօր հա-
յութիւնը իսպառ անհետանալու վրայ է, քա-
նի մը տարի ևս մէկմէկ-օսմաններու կատար-
եալ որջ մը պիտի դառնայ, ու մենք արտա-
սահմանի հայերս իրաւունք չունինք այն պաշ-
տելի հերոսներու յիշատակը տօնելու, երբ
չկարենանք պահել անոնց կողմէն մեզ յանձ-
նուած աւանդը պահել, ո՛չ, սիրելի հայրե-
նակիցներ, չխաբենք ինքզինքնիս. երբ իւրա-
քանչիւրս մեր կարողութեան չափով ձեռք
չենք տար մեր ինկած Հայրենիքին վերական-
գանացման: Փքուռոյց ճառեր, չոր ու ցամաք
դովաբանութիւններ չեն կրնար մեզի փրկել,
Հայաստանի անթիւ որբերը անօթութենէ կը
մեռնին, կոյսերը վաճառող գաղաններէ կ'ա-
ռւանգուին, մեր երիտասարդներէն ոմանք
բանտերու խորը, ոմանք աքսորաւայրերը կը
հեծեն և ոմանք ալ ցուրտ շիրիմը գրկեցին,
մարած է մեր սրտերուն մէջ հայրենասիրու-
թեան կայծը և տարուան մէջ մէկ-երկու ան-
գամ հանդէսներու ատեն միայն «Հայրենիք»
ու «Ազգ» բառերը մեր չըթուենքներէն թափ-
թփելով պարտականութիւննիս կատարած ըլ-
լալ կը կարծենք: Հայաստան կոչուող մեր
հայրենիքը արեան դաշտ դարձած՝ զարհուրելի
տեսարան մը կը պարզէ մեր առջև, անոր
սրախողխող եղած հարիւր-հազարներով զա-
ւակներու արեւը, վրէժ կ'աղաղակէ...

Ներկայ դարու Վարդան-Վահանները,
Ժիրայր, Պետօ, Աւետիսեան, Մինասեան,
Արամեան, Սերոբ-Աղբիւր, որ մէկը թուեմ-
աննման հերոսները յուսահատ սեւ հողին
յանձնեցինք և իրենց աեղերը բաց թողինք:
Մեր օրհասական այս ճգնաժամին մէջ ամեն
հայ անհատի սրբազան պարտականութիւնն է
օգնել Հայրենիքի Ս. գաղտին, թէպէտ և օրա-
պահիկիս հազիւ ճարելու կարող ըլլանք,
վասն զի ի՞նչ կ'արժէ ստրուկի մը նախատալից
կեանքը: Բայց ո՞րչափ ցաւալի և կսկծալի է
որ մեր մէջ. նոյն իսկ շատերու կողմէն յե-

ղափոխութիւնը ջլատելու ջանքեր չի խը-
նայուեցան, յեղափոխութիւնն՝ որ միակ մի-
ջոցն է մեր ազատագրութեան և յառաջդի-
մութեան, և երբ ան դադրի մեր մէջէն գո-
յութիւն ունենալէ, այն օրէն հայութիւնն ալ
գերեզման կը դրուի, ուրեմն ջանանք յեղա-
փոխութիւնը զօրացնել որպէս զի արեւնար-
բու թշնամին սանձահարելով, նպատակնիս
պսակուի...

Հայ հարուստ, բաց քու անմատչելի քը-
սակը, տուր Հայրենիքի սրբազան դատին հա-
մար, բայց ոչ թէ իբր ողորմութիւն, քանի մը
սեւ դրամներ (ինչպէս շատերու սովորութիւնն
է ընել), եթէ հայրենիքը գերութեան մէջ
մնայ, թշնամին կեանքիդ հետ մէկտեղ հա-
րստութիւնդ ալ պիտի խլէ, օրինակները շատ
տեսար...

Եւ դու հայ կղեր, ալ բաւ սեպէ այս-
պիսի հանդէսներու մէջ պահպանիչ չը-
ռայելը, քիչ մըն ալ դարձուր աչքերդ գերեզ-
մաններով ծածկուած Հայաստանին՝ մուխի
և մոխրի կոյտերու տակ թաղուած այդ տա-
րաբախտ երկիրը, որ օգնութեան և քաջալե-
րութեան կարօտը կը քաշէ. բա՛ւ է ինչ որ
խաչն ու Աւետարանը սոսկ ապրուստի միջոց
ըլլը, օտար կղերը ազաւախ պէս հոն փու-
թաց, Լուսաւորչի հօտը փարախէն զատելու
համար, և դո՛ւ անփոյթ հովիւ, ո՛ւր է որ
«քու անձդ ոչխարներուդ վրայ պիտի դնէիր»
Եղիշէի ու Ղեւոնդի առաքինութիւնները քեզ
օգուտ չունին, ջանայ որ դու ինքդ Եղիշէ կամ
Ղեւոնդ ըլլաս:

Ո՛ հայ երիտասարդ, ինչո՞ւ կը տա-
տամիս, աշխատէ հին և նոր Վարդաննե-
րու հողին վրայ, անոնց ածիւններուն քով
հասնիլ և հոն միայն բաց ճակատ կռիւ մը-
ղիլ հայրենիքիդ արերիչին դէմ: Տես, դու
սիրտ չունի՞ս, հոն են անագորոյն ու զազան
թշնամիին սրին տակ քու սրտի հատորներդ,
սիրելիներդ: Դրոշմ ու ամսանոյդ պատիւը,
ծնողացդ ու զաւակներուդ կեանքին թելը,
կը փչրուի թշնամիիդ մէկ հարուածով և դու
բոլորովին կ'անբախտանաս, փութայ հոն հաս-
նիլ, անոնք քու օգնութեանդ ապաւինած են,
կամ զանոնք ալ փրկէ և կամ դու ալ մեռիր,
միայն քաջի մը վայել մահով, ալ բաւ է որ
օտար երկնքի ու աստղերու տակ թափառե-
ցար, եթէ մեր չաշխատինք մեր վիճակը բարե-
փոխելու, ուրիշներու փոյթը չէ մեզի ազաւել:
Յունաստանի, Իտալիայի, Պոլկարիոյ և այլն
պատմութիւններու դիմել հարկ չկայ, թարմ
օրինակներ ունինք մեր աչքին առջև: Ի՞նչ էր
երէկուան կրեւէն. կարմիր-Սուլթանին միա-
ցան նաեւ եւրոպական անսիրտ դիւանագէտ-
ները և իրենց թնդանօթներով ուղեցին սար-
սափեցնել, ընկճել այդ քաջարի կղեցիները,
բայց անոնք անկուռն Պաթին (մահ կամ ա-
ղատութիւն) նշանաբան ընտրելով, և այսօր
ազատ են: Տես նաեւ Պօէր ժողովուրդը, աշխար-
հի ամենէն հզօր բռնաւորին դէմ յուսահատի
կռիւ կը մղէ, արդեօք այս ժողովրդին ան-
նկուռ հայրենասիրութիւնը և երկաթէ կամքը
չչիկնեցներ զմեզ, գիտեմ, մեր խօսքով հայ-
րենասէրները կ'առարկեն թէ «անոնք աղա-
տութիւն ունէին որով կըրցան մարդուած զօրք
իշխեցնել պատերազմի դաշտը», և այլն, սակայն
ըստ իս ասոնք հում առարկութիւններ են մի-
այն, բանգի մեր Հայրենիքի մէջ կուռղ և
տարիներով թուրք կառավարութիւնը զբաղե-
ցնող սակաւաթիւ հայ կտրիճները մեր եղ-

բայրներն են և ոչ թէ Հարաւային-Ափրիկէէն կամ Եւրոպայէն եկած ռազմագէտներ: Համայն աշխարհ սքանչացաւ Պօէր ժողովրդի դիւցազնական ճիգերուն հանդէպ, իրենց կիները պատրաստականութիւն ցոյց տուին զէնք առնել և այրերու հետ պատերազմի դաշտը վազել, իրենց հայրենիքը փրկելու համար: Այո՛, հայ աշխարհն ալ ծնած է հին ժամանակը կարինէներ, ու հիմա ալ Շաքէ և Սօսիներ, սակայն ամսո՞ւս որ, մենք զիրենք անօգնական կը թողունք:

Մինչդեռ մենք այստեղ հանդէսներ կը կատարենք, անդին մեր դժբախտ Հայրենիքը ծայրէ ի ծայր սև սուգ պատած է, Հայաստան հիմա ամեն ժամանակէ աւելի թշուառ է, յուսահատօրէն կ'ողբայ իր ինկած նոր հերոսներուն վրայ, ուստի ջանանք սփռել այդ վշտալի Հայրենիքը, և երբ երկինք շնորհեց մեզ տեսնել հայրենի խաւար հորիզոնին վրայ Ազատութեան աշաղոյսի ծագումը, այն ստեն միայն տօնենք ազատ-Հայաստանի մէջ իր հին ու նոր Հերոսներու յիշատակը:

Ա.Լ.Ս. ՈՐԴԵԳԻՐԸ

Արտասահման, 15 Փետր. 1901

ՀԱՅ ՅԵՂԱՓ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ԾՈՒՐՋԸ

Մեր հայ յեղ. կուսակցութեանց մասին խօսելու կամ գրելու համար պէտք է խիստ անկողմնակալ ոգով նայել գործին վրայ: Եթէ յօդուածագիրս, ինչպէս ուրիշ անգամներ այս անգամ ալ մեծամասնութեան արձագանքը եզրող «Միութիւն» թերթին միջոցաւ հրապարակ գալով կուսակցութեանց մասին կը գրեմ, միակ պատճառն այն է որ՝ մինչև ցարդ, հակառակ այնքան պատեհութեանց և հանգամանաց (գէթ խղճովս կարող եմ խոստովանիլ) չեմ հղած կուսակցական մը, որովհետեւ եթէ միութեան ոյժը թողլով մի սերիշ կուսակցութեան անուան տակ գործէի, ընթերցողը ինձ հետ կարող էր համոզուած ըլլալ որ, այն ատեն որչափ ալ բարի հայեացքներ ունենայի հանդէպ հայրենիքի ազատութեան Սբ. գործին, դարձեալ յակամայս պիտի հնազանդէի յարած կուսակցութեանս նպատակին և ուղղութեան հետեւաբար անկարելի պիտի դառնար ինձ իբր հայ անհատ մը ամենափոքր ծառայութիւն մը մատուցանել ազգիս: Զի չփութութիւնը շատ և բազմադիմի ծառայութիւններ կրնայի ընել, բայց ոչ այն՝ ինչ որ պէտք էր. այսպէս ալ կուսակցականները ամենանշանաւոր գործիչներէն սկսեալ մինչև յետին զինուորը, թէպէտ և իրենց անհատական ծառայութիւնները մատուցած են. բայց ոչ այն, ինչ որ պէտք էր ըրած ըլլային միութեան ուժի մէջ: Այո՛, ժամանակն է ըսել որ, կուսակցականներու «ես»ը իրարու հանդէպ զրգուռելով մին միւսին հակառակ աննպատակ ցոյցեր ընելով, յաջողեցան վերջապէս Մարգարէի արիւնկալ հրէշադէմ յաջողը սթափեցնել իր քնէն ու կատաղի արիւնհաւոր փրփուրներ թափել տալ անդէն ժողովրդի վրայ:

Դուք չէիք պ.պ. կուսակցականներ, որ գէթ ներկայ ժամանակիս հայերու միակ միութարութիւնը եւող Ազգ. Սահմանադրութեան տօնը ջնջելու պատճառ դարձաք. ինչ տեղի կար այն օրը Ազգային Հիւանդանոցի

պարտէզին մէջ փոխանակ խահուածեամբ Սահմանադրութեան տօնը պայծառացնելու, եւ լաք տգեղցնել տղայական ըմբոստ ցոյցերով աղմկայոյզ խրտումներ յարուցիք, ուր տեղ կանգնած ձեզ կը դիտէին թիւրք լրտեսներու խողահայեաց վահակը: Մեղքը չէիք պարոններ, որ ձեզ հետ գործին անծանօթ շատ մը երիտասարդներ անստուգութեան մատնեցիք, հարուստն աղքատութեան ենթարկեցիք. իսկ աղքատն ալ աւերակաց մոխիրներու վրայ նստեցուցիք: Խնդրեմ ասացէք, ձեր անպատեհ և կանխաձայն շարժումներու շնորհիւ չէ՞ր որ հայ կինը իր ամուսնէն յափշտակեցին, հայ աղջիկը իր եղբորմէն խնային, աւերեցին ու կործանեցին զիւղացիին և քաղսքացիին չէնք ու բնակութիւնը, ժողովրդին առջև երբէք արդարացուցիչ փաստ չունիք, քանի որ գործը դեռ լիապէս չէր կազմակերպուած, քանի որ զիտակցութիւնը ուժեղ կերպով չէր տպաւորուած: Մերիններուն մէջ, քանի որ զիւղացիին դեռ զէնքն ու սուրը՝ իր խփէն ու բահէն աւելի սիրելու զաղափարին ծանօթ չէր, քանի որ գուհիկ արհեստաւորին և պերճաբան գրագէտին մէջ հայրենիքի պաշտպանութեան խնդրոյ առթիւ համերաշխ միտք գոյացած չէր, գիտէ՞ք, դեռ քանի որ հայ կինն ու աղջիկը իր արդուզարդի ու պճնուելու սէրէն՝ ազատութեան Սբ. գործին վրայ աւելի բարձր հայեացքը ունենալու տրամադրութեան մէջ չէր կամ ըսենք թէ անկարող էր ըլլալու: Հետեւաբար աղին ընկերներ, դուք որպէս կուսակցական կամ իբրեւ պրօպագանդիստներ, փոխանակ նախօրօք անվարժ երիտասարդին ձեռքը զէնքն ու փամփուշտը տալու, իբրեւ ուսուցիչ պիտի քարոզէիք անոր հայրենիքի ազատութեան սէրն ու զիտակցութիւնը, կարելի է ուրանալ որ շատ ու շատ կտրիճներ յոխորտալով իրենց քաջութեան վրայ և թշնամիին դէմը կանգնելու ու ճակատ պարզելու համար թեթեւ կրթութիւն մը իսկ չունենալով կուրօրէն գնացին ու ինկան սուրին և կրակին տակ. ուրեմն այստեղ ո՞վ է յանցաւորը, եթէ ոչ կուսակցութիւնները: Հիմա դառնանք միջին եզրակացութեան և ըսենք որ եթէ փոխանակ բաժան բաժան կուսակցութիւններու մէջ միութեան գաղափարը ի գործ դնէինք և այնպէս սկսէինք, այն ատեն կունենայինք մի ոյժ, մի խելք և մի գործ: Եթէ մեր կուսակցականներու դատապարտելի կողմը մատնանիլ ընել ուզենք, այսօր, գլխաւորաբար իրարու հակառակեցան եսական ու անձնական անարգ հաշիւներով... որով սոսկալի կերպով փնտսեցին Գործին: Եւ այժմ ալ ելեր իրենց օձիքը ազատելու համար, կը փաստաբանեն թէ անհրաժեշտ էր որ ցոյցերը ըլլային և իրենց հետեւեցող յառաջ եկած կոտորածներն ալ բարեբար ազդեցութիւնները ունեցան: Ո՞րն է այդ բարեբար ազդեցութիւնները, — հայութիւնը կործանման դուռը հասցնելն է արդեօք — դառն յուսախաբութիւն... Յուցարարները շատ ու շատ բաներ ըրին ու թերի թողին և չի բարեհաճելով իրենց կեանքը երեցող վտանգին զոհել դասալիք եղան ու հեռացան, որոնցմէ միայն երկուքը յիշենք:

Պարսկա-թրքական սահմանազխու մտերը գնացին Շէրիֆ բէկը սպաննելու, բայց կամ թշնամույն վտանգը գուշակելով և կամ իրենց անձնավտահութեան վրայ կասկածելով հտ քաշուեցան: Կ Պոլիս 1896ի օգոստոս

14ին Բանկ Օթոմանի վրայ յարձակեցան գործել և համար, բայց քիչ վերջը ձեռնուռնայն դուրս եկան աղետալի կոտորածի մը առիթ դառնալով:

Ուրեմն, հետեւութիւնները կը ցուցնեն թէ՛ կուսակցականներու ըրածները անխորհուրդ կերպով էին, և մենք ամենքս ալ իրար չի լսելով ու անհեռառես ըլլալով տուժեցինք ու տակաւին ալ պիտի տուժենք:

Հեռաւապէս կուսակցականները յանցաւոր և միանգամայն դատապարտելի են, վասնզի վստահաբար դիտէին որ թշնամին անհամեմատաբար մենէ զօրեղ էր, մինչդեռ մենք կարեւոր ոյժ մը չունենալէ ի դատ ինքնապաշտպանութեան միջոցներէն ալ զուրկ էինք: Իսկ այժմ ինչ կարող ենք ընել, ահա կարեւոր խնդիր: Կուսակցութեանց պ ղեկավարները մեր կրտս սոսկալի աղետներէն գործնականապէս թող օգտուին. միութեան ու համերաշխութեան կապերով ամրապնդել ջանան բաժնուած ու ցրուած ոյժերը, որոնցմով գոյանայ Ներքին Ռեժիմը, որուն պէտքը միայն զգալի է ներկայիս մէջ: Մտած թղթերով չէ որ հայրենիք պիտի փրկուի, բիրտ ոյժն է որ ազդերու գոյութիւնը կը պահպանէ և ով որ ոյժ չունի տպրելու իրաւունքն կը զրկուի, ահա այս է աշխարհի ներկայ դրութիւնը:

ԲԱՀԱՆՍԱՅՈՒ ԶԻՆՈՒՈՐԸ

Դաշուին, (Պարսկաստան)

17 Յունվար 1901

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԳՈՐԾԱԾՈՒՄՍ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐՈՒ
(Timbres-Poste pour collections)

Պատիւ ունինք ծանուցանել հայ հասարակութեան մեր նոր գրասենեակը, ուր պատրաստ ենք փափաքողներու ամենայն զիւրամատչելի գներով հայթայթել ամեն տեսակ նամակադրոշմներ նամանաւանդ հելլենականներ, որոնց մասին աւելի մասնագիտութիւն և ճոխ հաւաքածոյներ ունինք:

Փափաքողք դիմեն հետեւեալ հասցէին:

Agop Garabedian et C^{ie}
12, Rue de Stade 12,
Athènes (Grèce)

„ԲԱՆԱՍԵՐ“

ՀԱՆԴԵՍ ԵՌԱՄՍԵԱՅ

Հնախօսական, Պատմական, Լեզուաբանական և Քննական:

«Բանասէր»-ի տարեկան բաժնեկիցին է 20 Ֆր. ամեն տեղի համար: Մէկ գիրքը կ'արժէ 6 Ֆր. — Բաժանորդագրութիւնը կ'անխիկ է «Բանասէր»-ը քիչ քանակութեամբ տպուելուն համար կը խնդրուի որ բաժանորդ գրուելու փափագողները՝ կամխաւ յայտնեն իրենց հաճութիւնը:

Հասցէ Mr. G. Basmadjian,
Paris, 112 Bd. Rochechouart

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԵՅԹՈՒՆ

ՏԱՂԱՏԱՓԵԱԼ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՐՆ

Ծերուկ քնարաւն Ս. ՖԷԼԵԿԵԱՆԻ

Սոյն ընտիր քերթուածը՝ որ նուիրուած է ի յիշատակ Սասունի և Զէյթունի անուան, իր վրայ կը կրէ երջանկայիշատակ Նուպար փ լայի Բարոյական Մահարձանի մա'դիրը: Ծերուկի քերթողը դարձեալ կ'երևի գրական ասպարէզին մէջ իր հոգեյոյզ տաղերգութեամբը թրթռացնելով անմիթոր Հայոց վշտահար սրտերը, ջերմապէս կը յանձնարարենք զրասէր հասարակութեան ուշադրութեանը: Գրքոյկը կը բաւկանայ 160 էջերէ, ընտիր թղթի վրայ՝ մաքուր տպագրութեամբ: Փափագողք թող դիմեն «Արշալոյս»-ի խմբագրութեան ի Գահիրէ: